ՀՈԳԻՆ ԵՎ ՓՐԿԱԳՆՈՒՄԸ

Երեք փուլերը...

- Փրկագնման սպասումը.

    - Ծննդոցից Մաղաքիա
    - Հոգին՝ Իսրայելի հետ

- Փրկագնման իրագործումը.

    - Մատթեոսից Հովհաննես
    - Հոգին՝ Քրիստոսի վրա

- Փրկագնման կիրառումը.

    - Գործք Առաքելոցից Հայտնություն
    - Հոգին՝ եկեղեցում

Փրկագնման սպասումը. Հոգին՝ Իսրայելի հետ

- Հին Կտակարանում Սուրբ Հոգու ներկայությունը մշտական չէր:

«Եվ Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից, և Տիրոջ կողմից մի չար ոգի նեղում էր նրան»:
(Ա Թագավորաց 16.14)

«Դեն մի՛ գցիր ինձ Քո երեսից, և Քո Սուրբ Հոգին վեր մի՛ առնիր ինձանից»:
(Սաղմոս 51.11)

- Հին Կտակարանում Սուրբ Հոգին դեռևս չիրագործված խոստմունք էր:

«Որովհետև պալատը թողված է, քաղաքի աղմուկը՝ ձգված, Օփել ու աշտարակը հավիտյան քարայրների տեղ պիտի լինեն ցիռերի զվարճության՝ խաշինքների արոտ լինելու համար: Մինչև որ մեզ վրա հոգի թափվի վերևից, և անապատը պտղաբեր արտ դառնա, և պտղաբեր արտը անտառ համարվի: Եվ անապատում կբնակվի իրավունքը, և արդարությունը պտղաբեր արտում կնստի»:
(Եսայիա 32.14-16)

«Եվ Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրտը և ձեզ մարմնեղեն սիրտ պիտի տամ: Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և նրանց կատարեք: Եվ բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրերին, և Իմ ժողովուրդը լինեք, և Ես ձեր Աստվածը լինեմ»:
(Եզեկիել 36.26-28)

«Եվ այլևս չեմ ծածկի Իմ երեսը նրանցից, որովհետև Իմ Հոգին թափած կլինեմ Իսրայելի տան վրա, ասում է Տեր Եհովան»:
(Եզեկիել 39.29)

«Եվ պիտի լինի սրանից հետո, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա, և պիտի մարգարեանան ձեր տղաներն ու ձեր աղջիկները, ձեր ծերերը երազներ պիտի երազեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Եվ ծառաների ու աղախինների վրա էլ պիտի թափեմ այն օրերը Իմ Հոգին»:
(Հովել 2.28-29)

- Հոգին հնարավոր է դարձնում Աստծո <u>գործի</u> կատարումը:

    - Նա զորացնում է Աստծո ժողովրդին՝ առաջնորդելու:

«Եվ Եհովան ասաց Մովսեսին. «Ինձ համար Իսրայելի ծերերից յոթանասուն հոգի ժողովի՛ր, որոնք որ դու գիտես, թե ժողովրդի ծերերն ու գլխավորներն են, և նրանց վե՛ր առ, ժողովքի խորանը բեր, և այնտեղ քեզ հետ կանգնեն: Եվ Ես այնտեղ կիջնեմ և կխոսեմ քեզ հետ և քեզ վրա եղած հոգուց կառնեմ և նրանց վրա կդնեմ, և ժողովրդի բեռը վեր կառնեն քեզ հետ, և դու մենակ չես վեր առնի»»:
(Թվոց 11.16-17)

«Եվ Եհովան ասաց Մովսեսին. «Ա՛ռ քեզ մոտ Նավեի որդի Հեսուին, որի վրա Հոգի կա, և ձեռքդ նրա վրա դի՛ր»»:
(Թվոց 27.18)

«Եվ Տիրոջ Հոգին եղավ նրա վրա, և Իսրայելի մեջ դատավորություն էր անում, և երբ որ պատերազմի գնաց, Տերը Միջագետի Քուսարսաթեմ թագավորին նրա ձեռքը տվեց, և նրա ձեռքը Քուսարսաթեմի դեմ զորացավ»:
(Դատավորաց 3.10)

«Եվ երբ որ եկան այնտեղ բլուրը, ահա մարգարեների մի գունդ նրա առաջ դուրս եկան: Եվ Աստծո Հոգին նրա վրա եկավ և նրանց մեջ մարգարեություն արեց»:
(Ա Թագավորաց 10.10)

«Եվ Սամուելը յուղի եղջյուրն առավ և օծեց նրան իր եղբայրների մեջ, և այն օրից հետո Տիրոջ Հոգին եկավ Դավիթի վրա, և Սամուելը վեր կացավ գնաց Ռամա»:
(Ա Թագավորաց 16.13)

- Նա Աստծո ժողովրդին օժտում է <u>իմաստություններով</u>:

«Եվ դու խոսի՛ր բոլոր իմաստուն միտք ունեցողների հետ, որոնց Ես իմաստության հոգով լցրի, որ Ահարոնի համար զգեստները շինեն՝ նրան սրբելու համար, որ Ինձ քահանայություն անի»:
(Ելից 28.3)

«Եվ Եհովան խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. «Ահա կանչեցի անունով Ուրի որդի Ուրիի որդի Բեսելիելին Հուդայի ցեղից: Եվ լցրեցի նրան Աստծո Հոգով՝ իմաստությունով և հանճարով և գիտությունով և ամեն ճարտարությունով, որ վարպետի գործեր հնարի՝ ոսկով և արծաթով և պղնձով գործելու համար, և քարեր քանդակել՝ ընդելուզանելու համար, և փայտեր քանդակել՝ ամեն կերպ արհեստով գործելու համար»»:
(Ելից 31.1-5)

«Եվ Մովսեսն ասաց Իսրայելի որդիներին. «Տեսե՛ք, Եհովան Ուրի որդի Ուրիի որդի Բեսելիելին կանչեց Հուդայի ցեղից՝ անունով: Եվ լցրեց նրան Աստծո Հոգով՝ իմաստությունով, հանճարով և գիտությունով և ամեն կերպ ճարտարությունով, որ վարպետի գործեր հնարելով՝ ոսկու և արծաթի և պղնձի վրա գործի և ընդելուզանելու համար քարեր քանդակի և փայտեր քանդակի և ամեն կերպ վարպետի գործ գործի: Եվ նրա սրտի մեջ դրեց, որ սովորեցնի էլ, նրա էլ և Դանի ցեղից Աքիսամայի որդի Ոողիաբին էլ: Սրտի իմաստությունով լցրեց նրանց, որ ամեն տեսակի գործ գործող և հնարքներ հնարող քանդակագործի և արվեստավորի գործը, նաև կապուտակի և ծիրանագույնի և կրկնակի կարմիրի և բարակ քթանի վրա նկարագործողի և ոստայնանկի գործն անեն»:
(Ելից 35.30-35)

- Նա Աստծո ժողովրդին հաղթելու զորություն է տալիս:

«Եվ նա հին օրերը, Մովսեսին և Իր ժողովրդին հիշեց. «Ո՞ւր է Նա, որ վեր հանեց նրանց ծովից Իր հոտի հովիվով, ո՞ւր է Նա, որ նրանց մեջ դրեց Իր Սուրբ Հոգին, որ ման ածեց Մովսեսի աջ կողմում Իր փառավորության բազուկը, որ պատառեց ջրերը նրանց առաջ, որպեսզի Իր համար հավիտենական անուն շինի, որ նրանց անցկացրեց անդունդներով, որոնք չսահեցին, ինչպես որ ձին անապատում»»:
(Եսայիա 63.11-13)

«Այն ժամանակ Սավուղը մարդիկ ուղարկեց, որ Դավիթին բռնեն, և երբ որ նրանք տեսան մարգարեություն անող մարգարեների ժողովը և նրանց վերակացու Սամուելին կանգնած, Աստծո Հոգին Սավուղի ուղարկած մարդկանց վրա եկավ, և նրանք էլ մարգարեություն արեցին»:
(Ա Թագավորաց 19.20)

- Նա Աստծո ժողովրդին քաջալերում է հաստատ <u>մնալու</u>:

«Տե՛ր, փրկի՛ր ինձ իմ թշնամիներից. ես Քեզ եմ ապավինել: Սովորեցրո՛ւ ինձ կատարել Քո կամքը, որովհետև Դու ես իմ Աստվածը: Քո բարի Հոգին թող առաջնորդի ինձ դեպի ուղիղ երկիր»:
(Սաղմոս 143.9-10)

«Եվ հիմա ակա՛նջ դիր, ո՛վ իմ ծառա Հակոբ և ո՛վ Իսրայել, որին Ես հավանել եմ: Այսպես է ասում Եհովան՝ քեզ Ստեղծողը, քեզ արգանդից կազմողը, որ քեզ օգնում է, մի՛ վախեցիր, ո՛վ իմ ծառա Հակոբ, և ո՛վ Հեսուրուն, որին Ես հավանել եմ: Որովհետև ջուր պիտի թափեմ ծարավի վրա և հեղեղներ՝ չորության վրա, Ես պիտի թափեմ Իմ Հոգին քո սերնդի վրա և Իմ օրհնությունը՝ քո զավակների վրա»:
(Եսայիա 44.1-3)

«Եվ նա պատասխանեց և ասաց ինձ, թե սա Տիրոջ խոսքն է առ Զորաբաբել՝ ասելով. «Ոչ թե զորությունով և ոչ թե ուժով, այլ Իմ Հոգով, ասում է Զորաց Տերը»»:
(Զաքարիա 4.6)

«Սակայն հիմա զորացի՛ր, ո՛վ Զորաբաբել, ասում է Տերը, և զորացի՛ր դու, ո՛վ Հովսեդեկյան Հեսու՝ մեծ քահանա: Եվ զորացի՛ր, ո՛վ երկրի բոլոր ժողովուրդ, ասում է Տերը, և աշխատե՛ք, որովհետև Ես ձեզ հետ եմ, ասում է Զորաց Տեր Աստվածը: Այն խոսքի համեմատ, որ Ես կապել եմ ձեզ հետ ձեր Եգիպտոսից դուրս գալիս, Իմ Հոգին կենում է ձեր մեջ, մի՛ վախեցեք»:
(Անգե 2.4-5)

- Հոգին մղում է <u>երկրպագելու</u> Աստծուն:

«Եվ սրանք են Դավիթի վերջին խոսքերը. Հեսսեի որդի Դավիթի խոսքը և այն մարդու խոսքը, որ վեր բարձրացավ. Հակոբի Աստծո օծյալը, Իսրայելի վայելուչ երգերը շարադրողն էր. «Տիրոջ Հոգին խոսեց ինձանով, և Նրա խոսքն իմ լեզվի վրա էր»»:
(Բ Թագավորաց 23.1-2)

- Հոգին բացահայտում է Աստծո <u>Խոսքը</u>:

«Եվ ինձ ասաց. «Մարդո՛ւ որդի, կանգնի՛ր ոտներիդ վրա, որ քեզ հետ խոսեմ»: Եվ Հոգին մտավ մեջս, հենց որ Նա խոսեց ինձ հետ և ինձ կանգնեցրեց ոտներիս վրա, և ես լսեցի Նրան, որ խոսում էր ինձ հետ: Եվ նա ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, Ես քեզ ուղարկում եմ Իսրայելի որդիների մոտ, այն Ինձ դեմ ապստամբող ապստամբ ազգերի մոտ. նրանք և նրանց հայրերը հանցավոր եղան Ինձ դեմ մինչև իսկ այս օրը: Եվ որդիները պնդերես և խստասիրտ են: Ես քեզ նրանց մոտ եմ ուղարկում, և ասա՛ նրանց. «Այսպես է ասում Տեր Եհովան»: Եվ նրանք՝ թե լսեն, թե զանց անեն, որովհետև նրանք ապստամբ տուն են, և կիմանան, որ մարգարե է եղել իրենց մեջ: Իսկ դո՛ւ, մարդո՛ւ որդի, մի՛ վախեցիր նրանցից և նրանց խոսքերից էլ մի՛ վախեցիր, թեև մոտդ տատասկներ և փշեր էլ լինեն, և դու կարիճների վրա ես բնակվում, նրանց խոսքերից մի՛ վախեցիր և նրանց երեսից մի՛ զարհուրիր, թեև նրանք ապստամբ տուն են: Եվ Իմ խոսքերն ասա՛ նրանց՝ թե լսեն, թե զանց անեն, որովհետև նրանք ապստամբ են: Իսկ դո՛ւ, մարդո՛ւ որդի, լսի՛ր, թե Ես ինչ եմ ասում քեզ, ապստամբ մի՛ եղիր այն ապստամբ տան պես, բա՛ց բերանդ և կե՛ր, ինչ որ Ես տալիս եմ քեզ»»:
(Եզեկիել 2.1-8)

- ♦ Հայտնություն. Մարգարեն Աստծուց խոսք է ստանում:
- ♦ Ներշնչում. Մարգարեն <u>փոխանցում է</u> Խոսքը:
  - ▪ Նա հռչակում է Աստծո Խոսքը:

«Եվ Աստծո Հոգին եկավ Հովիադա քահանայի որդի Զաքարիայի վրա, և նա կանգնեց ժողովրդի առաջ մի բարձր տեղ և նրանց ասաց. «Այսպես է ասում Աստված՝ ինչի՞ համար եք դուք անցնում Տիրոջ պատվիրանով, ուրեմն հաջողություն չեք ունենա, որովհետև դուք թողել եք Տիրոջը, Նա էլ կթողնի ձեզ»:
(Բ Մնացորդաց 24.20)

«Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, ըստ որում Տերը օծել է Ինձ. Նա ուղարկել է Ինձ աղքատներին ավետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու և կապյալներին՝ արձակում, Տիրոջ համար հրատարակելու ընդունելի տարին և վրեժխնդրության օրը՝ մեր Աստծո համար, բոլոր սգավորներին մխիթարելու համար, Սիոնի սգավորների համար որոշելու, որ նրանց

փառք տրվի մոխրի տեղ, ուրախության յուղ՝ սգի տեղ, գովության պատմուճան՝ հանգած սրտի տեղ, և նրանց պիտի կոչեն արդարության բնեկնիներ, որ Տերը տնկել է Իր փառավորության համար: Եվ նրանք պիտի շինեն այն ավերակները որ վաղուց կան, առաջի փլատակները պիտի կանգնեցնեն և պիտի նորոգեն ավերման քաղաքները, դարեցդար ամայի մնացած տեղերը»:
(Եսայիա 61.1-4)

«Սակայն ես լցված եմ զորությունով՝ Տիրոջ Հոգով, նաև դատաստանով ու արիությունով, որ իմացնեմ Հակոբին իր հանցանքը և Իսրայելին՝ իր մեղքը»:
(Միքիա 3.8)

- Նա հոչակում է սուրբգրային Խոսքը:

«Եվ այն օրերում Պետրոսը վեր կացավ եղբայրների մեջ, ասաց, և այնտեղ հարյուր քսան հոգու չափ բազմություն կային. «Մարդի՛կ եղբայրներ, պետք էր այն գրվածը կատարվեր. որ առաջուց ասաց Սուրբ Հոգին Դավիթի բերանով Հուդայի համար, որ Հիսուսի բռնողներին առաջնորդ եղավ: Որ նա մեզ հետ համարված էր, և այս պաշտոնի վիճակը նրան էլ հասել էր»»:
(Գործք 1.15-17)

«Որ քո Դավիթ ծառայի բերանով խոսեցիր և ասացիր. «Ինչի՞ համար ազգերը խռովվեցին, և ժողովուրդներն ունայն բաներ մտածեցին: Երկրի թագավորները վեր կացան, և իշխանները մեկտեղ հավաքվեցին Տիրոջ դեմ և Նրա Օծյալի դեմ»:
(Գործք 4.25-26)

«Բայց առաջ այս իմացեք, որ Գրքերի ամեն մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի: Որովհետև երբեք մի մարգարեություն չտրվեց մարդկանց կամքի պես, բայց Սուրբ Հոգուց շարժված խոսեցին Աստծո մարդիկ»:
(Բ Պետրոս 1.20-21)

Փրկագնման իրագործումը. Հոգին՝ Քրիստոսի վրա

«Եկեղեցին երբևէ ինչպես հարկն է չի խոստովանել Սուրբ Հոգու ազդեցությունը Քրիստոսի գործի վրա: Ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ Սուրբ Հոգու աշխատանքը սկսվում է, երբ ավարտվում է երկրային միջնորդի աշխատանքը, կարծես մինչ այդ պահը Սուրբ Հոգին Երկնքում հանգստանում էր: Մինչդեռ Սուրբ Գիրքը նորից ու նորից սովորեցնում է մեզ, որ Քրիստոսն Իր միջնորդական աշխատանքը կատարել է Սուրբ Հոգու վերահսկողությամբ և մղումով»:
Աբրահամ Կույպեր

- Հին Կտակարանում Սուրբ Հոգու ներկայությունը մշտական չէր:

    - Քրիստոսի վրա Սուրբ Հոգու ներկայությունը <u>մշտական</u> է:

«Եվ վկայեց Հովհաննեսը և ասաց, թե. «Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքից և Նրա վրա մնում: Եվ ես չգիտեի Նրան, բայց Նա, որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ասաց ինձ, թե Որի վրա որ տեսնես՝ Հոգին վայր է գալիս և Նրա վրա մնում, Նա է Սուրբ Հոգով մկրտողը: Եվ ես տեսա և վկայեցի, թե սա է Աստծո Որդին»:
(Հովհաննես 1.32-34)

- Հին Կտակարանում Սուրբ Հոգին դեռևս չկատարված խոստմունք էր:

    - Քրիստոսի վրա Սուրբ Հոգին <u>իրագործված</u> խոստմունք է:

«Եվ Հեսսեի բնից մի շառավիղ է դուրս գալու, և մի ընձյուղ է բուսնելու նրա արմատներից: Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի և զորության հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի հոգին: Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է, և Նա Իր աչքի տեսածի պես չի դատի և ոչ Իր ականջների լսածի պես կհանդիմանի»:
(Եսայիա 11.1-3)

«Եվ Հիսուսը իմանալով հեռացավ այն տեղից, և շատ ժողովուրդներ գնացին Նրա ետևից, և Նա նրանց ամենքին բժշկեց: Եվ նրանց սաստեց, որ Նրան հայտնի չանեն: Որ կատարվի Եսայի մարգարեի ձեռքով ասվածը, որ ասում է. «Ահա Իմ ծառան, Որին Ես ընտրեցի, և Իմ սիրելին, Որին Իմ Անձը հավանել է: Իմ Հոգին Նրա վրա կդնեմ, և Նա հեթանոսներին իրավունք կպատմի: Նա ո՛չ կհակառակվի և ո՛չ կաղաղակի, և ոչ էլ հրապարակների մեջ մեկը Նրա ձայնը կլսի: Ջախջախված եղեգը չի փշրի, և հանգչող պատրույգը չի հանգցնի, մինչև որ դատաստանը հաղթության հանի: Եվ հեթանոսները հույս կդնեն Նրա անունին»:
(Մատթեոս 12.15-21)

«Եվ Եսայիա մարգարեի գիրքը տվեցին Նրան, և երբ որ գիրքը բացեց, այն տեղը գտավ, ուր գրված էր. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ: Նա Ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին թողություն քարոզելու և կույրերին՝ տեսություն, խոցվածներին արձակելու ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»: Եվ գիրքը խփեց, պաշտոնյային տվեց, նստեց, և ժողովարանի մեջ ամենքի աչքերը Նրան էին մտիկ տալիս: Եվ Նա սկսեց ասել նրանց, թե. «Այսօր այս գիրքը կատարվեց ձեր ականջներում»»:
(Ղուկաս 4.17-21)

Հոգին և Քրիստոսի մարմնացումը...

- Հոգին մարգարեաբար ճանապարհ էր պատրաստում մարմնացման համար:

«Եվ եղավ, երբ որ Եղիսաբեթը Մարիամի բարևը լսեց, երեխան նրա որովայնում խաղաց: Եվ Եղիսաբեթը Սուրբ Հոգով լցվեց: Եվ մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Օրհնյալ ես դու կանանց մեջ, և օրհնյալ է քո որովայնի պտուղը»»:
(Ղուկաս 1.41-42)

«Եվ նրա հայրը՝ Զաքարիան, Սուրբ Հոգով լցվեց, մարգարեացավ և ասաց. «Օրհնյալ է Իսրայելի Տեր Աստվածը, որ այցելության եկավ և փրկություն արեց Իր ժողովրդի համար: Եվ փրկության եղջյուր վեր կացրեց մեզ համար Իր Դավիթ ծառայի տանը: Ինչպես որ խոսեց հավիտենից Իր սուրբ մարգարեների բերանով. Փրկություն մեր թշնամիներից և բոլոր մեզ ատողների ձեռքից: Որ մեր հայրերի վրա ողորմություն անի և Իր սուրբ ուխտը հիշի: Այն երդումը, որ մեր հայր Աբրահամին երդվեց, որ մեզ տա, որ մեր թշնամիների ձեռքից ազատված աներկյուղ պաշտենք Իրեն սրբությունով և արդարությունով Նրա առաջ մեր կյանքի բոլոր օրերում»:
(Ղուկաս 1.67-75)

«Եվ ահա Երուսաղեմում մի մարդ կար, որի անունը Սիմեոն էր, և այս մարդը արդար և աստվածավախ էր և սպասում էր Իսրայելի մխիթարությանը, և Սուրբ Հոգի կար նրա վրա: Եվ նրան պատգամ էր եղած Սուրբ Հոգուց, որ մահ չի տեսնի, մինչև որ Տիրոջ Քրիստոսին կտեսնի: Եվ Հոգիով եկավ տաճարը, և երբ որ ծնողները Հիսուս երեխային բերեցին, որ օրենքի սովորության պես Նրա վրա անեն, նա էլ առավ Նրան ընդունեց իր գիրկը և Աստծուն օրհնեց և ասաց. «Հիմա արձակում ես Քո ծառային, ո՜վ Տեր, Քո խոսքի պես խաղաղությունով: Որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկությունը, որ պատրաստեցիր ամեն ժողովուրդների առաջ: Լույս՝ հեթանոսներին լուսավորելու, և փառք՝ Քո Իսրայել ժողովրդի համար»»:
(Ղուկաս 2.25-32)

- Հոգին հնարավոր է դարձրել ֆիզիկապես մարմնացումը:

«Եվ նա, նրան տեսնելով, շփոթվեց նրա խոսքի համար և իր մտքում մտածում էր, թե ինչպիսի՛ բան պիտի լինի այս ողջույնը: Եվ հրեշտակը ասաց նրան. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև Աստծուց շնորհք գտար: Եվ ահա կհղիանաս և որդի կծնես և նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի, և Տեր Աստված Նրա Դավիթ հոր աթոռը կտա Նրան, և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա: Եվ Նրա թագավորությանը վերջ չի լինի»: Եվ Մարիամն ասաց հրեշտակին. «Սա ինչպե՞ս կլինի. ըստ որում ես այր չգիտեմ»: Հրեշտակը պատասխանեց և ասաց նրան. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա կհովանավորի, դրա համար այն ծնված սուրբն էլ Աստծո Որդի կկոչվի»:
(Ղուկաս 1.29-35)

«Եվ Հիսուսի Քրիստոսի ծնունդն այսպես էր, այսինքն՝ Նրա մայրը՝ Մարիամը, նշանված լինելով Հովսեփի հետ, դեռ մինչև նրանց իրար մոտ գալը Սուրբ Հոգուց հղիացած գտնվեց: Եվ նրա մարդը՝ Հովսեփը, արդար լինելով և նրան խայտառակել չուզելով, խորհեց ծածուկ արձակել նրան: Եվ մինչդեռ նա մտածում էր այս, ահա Տիրոջ հրեշտակը երազում երևաց նրան և ասաց. «Հովսե՛փ՝ Դավիթի՛ որդի, մի՛ վախեցիր քեզ մոտ առնել քո կին Մարիամին, որովհետև նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է: Եվ նա որդի կծնի, և նրա անունը Հիսուս դնես, որովհետև Նա իր ժողովրդին կփրկի իրենց մեղքերից»»:
(Մատթեոս 1.18-21)

Հոգին և Քրիստոսի մկրտությունը...

- Հիսուսի մկրտության պահին Հոգին <u>հաստատեց</u> հինկտակարանյան խոստմունքը:

«Եվ մկրտվելուց հետո Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից, և ահա երկինքը բացվեց Նրա համար, և Նա տեսավ Աստծո Հոգին, որ վայր էր իջնում աղավնու պես և գալիս Նրա վրա: Եվ ահա երկնքից ձայն եկավ, որ ասում էր. «Դա է Իմ սիրելի որդին, Որին Ես հավանեցի»»:
(Մատթեոս 3.16-18)

«Հետևյալ օրը Հովհաննեսը տեսնում է Հիսուսին իր մոտ գալիս և ասում է. «Ահա Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը: Սա է, որի համար ես ասում էի, թե ինձանից հետո մի մարդ է գալիս, որ ինձանից առաջ եղավ, որովհետև ինձանից առաջ էր: Եվ ես Նրան չգիտեի, այլ որ Նա հայտնի լինի Իսրայելին, նրա համար ես եկա ջրով մկրտելու»: Եվ վկայեց Հովհաննեսը և ասաց, թե. «Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես վայր էր գալիս երկնքից և Նրա վրա մնում: Եվ ես չգիտեի Նրան, բայց Նա, որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ասաց ինձ, թե Որի վրա որ տեսնես՝ Հոգին վայր է գալիս և Նրա վրա մնում, Նա է Սուրբ Հոգով մկրտողը: Եվ ես տեսա և վկայեցի, թե սա է Աստծո Որդին»»:
(Հովհաննես 1.29-34)

- Հիսուսի մկրտության պահին Հոգին Հիսուսին <u>լիազորություն տվեց</u> ծառայելու:

«Եվ եղավ այն օրերը, որ Հիսուսը եկավ գալիլեացիների Նազարեթից և մկրտվեց Հովհաննեսից Հորդանանի մեջ: Եվ շուտով որ ջրից դուրս է գալիս, տեսավ երկինքը ճղված և Աստծո Հոգին աղավնու պես, որ իջնում էր Նրա վրա: Եվ ձայն եղավ երկնքից. «Դու ես Իմ սիրելի Որդին, Որին Ես հավանեցի»: Եվ շուտով Հոգին Նրան անապատը հանեց»:
(Մարկոս 1.9-12)

Հոգին և Քրիստոսի փորձությունը...

«Եվ Հիսուսը, Սուրբ Հոգով լցված, Հորդանանից ետ դառավ և Հոգիով տարվեց անապատը»:
(Ղուկաս 4.1)

«Եվ Հիսուսը Հոգու զորությունով ետ դառավ Գալիլեա, և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի ամեն կողմերը»:
(Ղուկաս 4.14)

- Հոգին Հիսուսին առաջնորդեց դեպի անապատ:
- Հոգին Հիսուսին զորացրեց անապատում:
- Հոգին Հիսուսին դուրս հանեց անապատից:

Հոգին և Քրիստոսի գործերը...

- Հիսուսը գործում էր Հոգու զորությամբ:

«Եվ Հիսուսը, նրանց խորհուրդներն իմանալով, ասաց նրանց. «Ամեն թագավորություն, որ իր դեմ բաժանված է, կավերվի, և ամեն քաղաք կամ տուն, որ իր դեմ բաժանված է, չի մնա: Եվ թե որ սատանան սատանային հանում է, իր դեմ բաժանվեց, էլ ինչպե՞ս նրա թագավորությունը կկենա: Եվ եթե Ես Բեեղզեբուղով եմ հանում դևերը, ձեր որդիներն ինչո՞վ են հանում. սրա համար նրանք կլինեն ձեր դատավորները: Բայց եթե ես Աստծո Հոգով եմ հանում դևերը, ուրեմն Աստծո արքայությունը ձեզ վրա հասել է»»:
(Մատթեոս 12.25-28)

- Հիսուսը գործում էր Հոգու ուրախությամբ:

«Նույն ժամում Հիսուսը Հոգով ցնծաց և ասաց. «Գոհանում եմ Քեզանից, Հա՛յր, երկնքի և երկրի Տեր, որ իմաստուններից և գիտուններից այս բաները ծածկեցիր և մանուկների հայտնեցիր: Այո՛, ո՛վ Հայր, որովհետև այսպես հաճո եղավ Քո առաջ»»:
(Ղուկաս 10.21)

Հոգին և Քրիստոսի չարչարանքները...

- Հոգին զորացրեց Հիսուսին խաչի վրա:

«Էլ որքա՞ն ավելի Քրիստոսի արյունը, որ հավիտենական հոգով Իր անձն անարատ պատարագ մատուցեց Աստծուն, ձեր խղճմտանքը կսրբի այն մեռած գործերից, որ կենդանի Աստծուն պաշտեք»:
(Եբրայեցիս 9.14)

- Հոգին Հիսուսին արդարացրեց հարությամբ:

«Պողոս Հիսուս Քրիստոսի ծառա՝ կանչված առաքյալ՝ Աստծո Ավետարանի համար որոշված: Այն, որ առաջուց խոստացավ Իր մարգարեների ձեռքով սուրբ գրքերում, Իր Որդու համար, ու մարմնի կողմից Դավիթի զավակից եղավ: Եվ Աստծո Որդի սահմանվեց զորությունով՝ սրբության Հոգու կողմից՝ մեռելներից հարություն առնելուց, մեր Տեր Հիսուս Քրիստոսի համար»:
(Հռոմեացիս 1.1-4)

«Եվ հայտնապես մեծ է աստվածպաշտության խորհուրդը. Աստված հայտնվեց մարմնում, արդարացավ Հոգով, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսներին, հավատացվեց աշխարհքում և վերացավ փառքով»:
(Ա Տիմոթեոս 3.16)

«Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց, այն Արդարը անարդարների վրա, որ մեզ մոտեցնի Աստծուն, որ թեև մեռավ մարմնով, բայց կենդանի եղավ Հոգով»:
(Ա Պետրոս 3.18)

Հոգին և Քրիստոսի համբարձումը...

- Հիսուսի համբարձումը Հոգու գալիք ներկայության խթանն էր:

«Եվ տոնի վերջին մեծ օրում Հիսուսը կանգնած էր, աղաղակեց և ասաց. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողը, ինչպես գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները, որովհետև դեռ Սուրբ Հոգին տրված չէր, որովհետև Հիսուսը դեռ չէր փառավորվել»:
(Հովհաննես 7.37-39)

«Եվ նրանց միասին ժողովված ժամանակ պատվեր էր տալիս նրանց՝ Երուսաղեմից չհեռանալ, այլ սպասել Հոր ավետիքին, որ ասաց. «Ինձանից լսեցիք: Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով կմկրտվեք, ոչ թե շատ օրեր սրանից հետո»: Եվ նրանք մեկտեղ գալով հարցնում էին Նրան և ասում. «Տե՛ր, այս ժամանակո՞ւմ ես կանգնեցնում Իսրայելի թագավորությունը»: Եվ Նա ասաց նրանց. «Ձեր բանը չէ գիտենալ ժամերը և ժամանակները, որ Հայրն Իր իշխանությունում դրեց: Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ մինչև երկրի ծայրերը»: Եվ երբ որ այս ասաց, նրանք նայելիս՝ վերացավ, և մի ամպ վեր առավ Նրան նրանց աչքերից»:
(Գործք 1.4-9)

- Հիսուսի համբարձումը շատ կարևոր էր Հոգու աշխատանքի շարունակության համար:

«Եվ այս խոսքերը լսելով՝ իրենց սրտերում կատաղում էին և ատամները կրճտացնում էին նրա վրա: Իսկ նա, լցված Սուրբ Հոգով, դեպի երկինքը նայեց և Աստծո փառքը տեսավ և Հիսուսին՝ կանգնած Աստծո աջ կողմում: Եվ ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդին կանգնած Աստծո աջ կողմում»: Իսկ նրանք մեծաձայն աղաղակելով խփեցին իրենց ականջները և միասին հարձակվեցին նրա վրա»:
(Գործք 7.54-56)

«Ո՞վ է, որ դատապարտի. Քրիստոսը, որ մեռավ և ավելի, որ հարություն էլ առավ և Աստծո աջ կողմում է, որ մեզ համար բարեխոս էլ է»:
(Հռոմեացիս 8.34)

- Հիսուսի համբարձումը հաստատումն է այն բանի, որ Հոգին առաջնորդելու է եկեղեցին մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը:

«Եվ դեռ որ նրանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դեպի երկինքը Նրա գնալուն, ահա երկու մարդիկ երևացին նրանց սպիտակ հանդերձներով, որ և ասացին. «Ո՛վ գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և մտիկ եք անում դեպի երկինք, այս Հիսուսը, որ ձեզանից վերացավ երկինք, այսպես կգա, ինչպես Նրան տեսաք երկինքը գնալիս»:
(Գործք 1.10-11)

«Որ ամեն բանի մեջ հարստացաք Նրանով՝ ամեն խոսքով և ամեն գիտությունով: Ինչպես Քրիստոսի վկայությունը հաստատվեց ձեր մեջ, որ դուք չպակասվեք ոչ մի շնորհքով մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությանը սպասելով: Որ և կհաստատի ձեզ մինչև վերջը՝ անմեղադրելի մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրում: Հավատարիմ է Աստված, Որի ձեռքով կանչվեցիք դեպի Նրա Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հաղորդությունը»:
(Ա Կորնթացիս 1.5-9)